# ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

2000 թվականի մարտի 25-26-ը Քյոլնի հայոց Առաջնորդարանում գումարվեց թեմական պատգամավորական երկօրյա ժողով՝ 13 համայնքների 57 պատգամավորների մասնակցությամբ: Ժողովին ներկա էին թեմի հոգևոր հովիվները՝ առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքճյանի գլխավորությամբ:

Սրբազան Հոր աղոթքից հետո բացման խոսքով հանդես եկած թեմական խորհրդի ատենապետ, դոկտ. Սարգիս Քեհյայանը նշեց, որ հիմնվել են երեք նոր համայնքներ Մայնց, Կիսսըն և Հալլը քաղաքներում:

Հոգեշնորհ Տ. Մերովբե վրդ. Իսախանյանն ընթերցեց պատգամավորական նախորդ երկու ժողովների ատենագրությունները: Այնուհետև ներկայացվեց Առաջնորդարանի տարեկան գործունեության համառոտ տեղեկագիրը: Քննարկվեցին նաև թեմական կյանքին առնչվող բազմաթիվ այլ հարցեր:

Կիրակի օրը, առավոտյան ժամը 9.00-ին, առաջնորդանիստ Ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցում տեղի ունեցավ Արևագալի ժամերգություն:

Երկրորդ նիստի ընթացքում քննարկվեցին «Առաջնորդարանը և ՀՀ դեսպանությունը» և բազմաթիվ այլ հարցեր:

Պատգամավորական ժողովն ապա ներկաներին տեղեկացրեց առաջիկայում թեմական խորհրդի նոր ընտրությունների մասին:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ առաջնորդ Սրբազան Հայրը: Նա իր խոսքում հատկապես շեշտեց Առաջնորդարան-համայնքներ կապի առավել զորացման խնդիրը: